

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

I.

Բոլոր զօրաճակատներում կոիւը ընթանում է առաջաւայ պէս կատաղի և աւելի մեծ տարածութեան վրայ ժբանս-զերմանական զօրաճակատում ինչպէս յիշում է ընթերցողը, գեռ երկու ամիս առաջ գէպքերը չափաղանց բարեյածող էին ֆրանսիայիների համար. Փրանսիական ճկուն, արագաշարժ և կորովի զօրքը, ընդհանուր համակրանք և սէր վայելող հրամանատարի ղեկավարութեամբ վերջին ամսում ցոյց տուեց իւր պատրաստուած լինելը և նահանջի ու յառաջխաղացման մէջ հաւասարապէս յաջողութիւն ունեցաւ. Օգոստոսի 19-ի վճռական ճակատամարտից յետոյ Գերմանիան փոխեց իւր ծրագիրը և համոզուելով, որ այնքան էլ դիւրին չէ Փարիզը զրաւելը, յետ դառաւ, և իւր այդ նահանջի տպաւորութիւնը մեղմելու համար յայտարարեց, թէ այդ նահանջը ունի ոազմագիտական նպատակ: Իւր զօրքերը Թրանսիայից նա մեծ արագութեամբ արեւելեան ռազմագաշտը տեղափոխեց և Ռուսական-Լեհաստանում երես առ երես կանգնեց Ռուսահաւոր բանակի հանդէպ: Շաբաթներ շարունակուեցին երկուստեք պատրաստառութիւնները. բարդ ռազմագիտական գործողութիւնների և ծրագրների գործադրման համար Ռուս զօրքը կենզրոնացաւ Վիսլա գետի ամբողջ ընթացքով, իւր կենզրոնը ունենալով Վարշաւան. Գերմանական 26 զօրաբանակնիրը, միացած աւստրիական մի քանի բանակների հետ, թուով մէկ և կէս միլիոն զօրք, բռնել էին Վարշաւա-Իվանդորով գիծը և մտադիր էին Կօղէնիցի մօտ անցնել Վիսլայի աջ ափը և արշաւել Վարշաւայի վրայ հարաւից և արեւելքից: Բայց այդ նրանց չը յաջողուեց: Սեպտեմբերի վերջին սկիզբ առաջ երկու կողմերի հսկայա-

կան ճակատամարտը, որ թերեւս իւր նմանը չէ ունեցել անցեալում. մի ամբողջ շաբաթ անընդհատ տևացող այս կռուռում եղանակի աննպաստ պայմանների մէջ, յորդ անձրեւի տակ և ցեխի մէջ բազմահազար զօրքը, հոկտեմբերի 8-ին այնպիսի վճռական և վերջնական հարուած հասցրեց գերմանական զրոհին, որի ազդեցութեան տակ գերման զօրքը անկարգ կերպով նահանջել է և թողել է Վիսլայի ձախ ափում իւր գրաւած ամրութիւնները: Գերմանական այս պարտութիւնը համոզեց Վիլհելմ Ա-ին, որ նա նապօլէօն չէ:

Ուուս-գերմանական զօրաճակատում հոկտեմբերի 8-ի այս մեծ յազդութիւնից յետոյ ռուսները արագօրէն արտաքսում են գերմանացիներին երկրից:

II.

Ուուս-արտօրիական զօրաճակատում վերջին ամսում աչքի ընկնող նորութիւն չէ նկաառել, ռուս արի զօրքերը Պերեմիշլ նշանաւոր բերդաբազաքը պաշարելով անցել են գեպի Հունգարիա Կարպատեան լեռներում կռուի են բըռնուել աւստրիական զօրքի հետ, մանր ընդհարումներ են եղել և Սան գետի և Տարնով քաղաքի շրջաններում: Պերեմիշլի անկումով, որի պաշարումով զրադուած է ռուսական մի քանի զօրաբանակ, այդ զօրքերը հնարաւորութիւն կունենան գեպի առաջ շարժուելու և Վիէննացիներին անհանգստացնելու, չնայած որ Աւստրիայի մայրաքաղաքում վաղուց են անհանգստանում: Նոր տիրած երկրներում՝ Գալիցիայում իւր Լիվով նշանաւոր քաղաքով՝ արդէն հաստատուել է ռուսական կառավարութիւն, գեներալ-նահանգապետ է նշանակուած նշանաւոր կոմս Ռօբրինսկին, որ ամենայն եռանդով նոր գրաւած վայրերում ռուսական տիրապետութիւնն է հաստատում:

Աւստրօ-Հունգարիայի գէմ պատերազմող Սերբիան և Զերնօրիան շարունակում են հերոսաբար կռուել իրենց արդար գործի համար. նրանց միացեալ բանակը սկզբում մօտ էր Սարակեօն պաշարելու, մինչեւ օրս էլ նրանք խի-

զախօրէն յարձակումներ են դործում թշնամու վրայ առանց զգալի կորուստներ տալու; Սերբիայի և Չեռնօքորիայի այդ քայլերը կազմակերպուած պարտիզանական յարձակումների բնոյթ է կրում և ունի այն նշանակութիւնը՝ որ Աւտորօ-Լունդարիան նրանց գէմ հանել է մեծ թուով զօրք, որի պատճառով և բաւականաչափ զիմադրութիւն չէ կարող ցոյց տալ Ռուսների արշաւանքին:

Թիւրքիայի գերը արգէն որոշ է: Կերմանացիք, համաձայն կանխակալ կարծիքների, կարօղացան Թիւրքիային օգտագործել իրենց նպատակների համար. և այսօր Թիւրքիան պատերազմի փողն է Հնչեցնում: Հոկտեմբերի 16-ին Սև ծովում լողացող մի քանի թիւրքական զրահանաւեր մօտենում են Նօվորազիյսկ, Թէոդոսիա և Կերչ նաւահանգիստներին և սկսում են ռմբակոծել. Թէոդոսիայում այս նաւային ցոյցը վերջ զրեց Թիւրքիայի տատանումներին: Նա ինքը նետուեց պատերազմի դաշտ: Դարդանելի նեղուցը մինչեւ այսօր էլ փակ է, միայն մի երկու անգամ նախ քան Սև ծովեան ցոյցը բացուել է՝ մարդատար շողենաւերին թողնելու համար: Թէե ասում էին, թէ վերջին ամսում Թիւրքիայում ծայր է առնում հակագերմանական շարժումը, որ Ազրիանօպօլսում զօրքը վրդովուել է և սոսկալի ծեծի է ենթարկել գերմանացի սպաներին տեղի է ունեցել արիւնահեղ ընդհարում և կ. Պօլսից էնվէր փաշան աճապարել է այնտեղ հանգստացնելու զօրքին,—բայց այդ բոլոր տեղեկութիւնները միայն աչքակապութիւն եր: Թիւրքիան կատարեց Դերմանիայի կամքը և պատերազմի բռնուեց Ռուսաստանի հետ:

III.

Տիրութեամբ արձանագրելու ենք և դժբաղդ Բելգիայի հիմնայատակ կործանումը: Բելգիական հազիւ 100,000-անց բանակը հերոսական ճիգեր թափեց պաշտպանելու հայրենի երկիրը գերմանական զրոհից: բայց նա շատ էր անզօր. Անզիւական օգնութիւնը ուշ եկաւ և ուժեղ զիմադրութիւն ցոյց չտուեց: Ինչպէս գիտէ ընթերցողը Բելգիայի զրութիւն ցոյց չտուեց:

մայրաքաղաքը Բրիւսելը զեռ պատերազմի առաջին շաբաթում ընկաւ գերմանացիների ձեռքը. Բելգիական կառավարութիւնը տեղափոխուեց Անտվելպէն, բայց ընկաւ և այդ նշանաւոր բերդաքաղաքը, որի պաշարումը մօտ մի ամիս տևեց. Անտվելպէնի պաշարումից ազատուած գերման զօրքը արագօրէն արշաւեց դէպի արեմուտք, զրաւեց համարեա ամբողջ Բելգիան, վերցրեց Գենտ, Բրիւգէ և Օստենդէ քաղաքները, չնայած որ վերջինը մի քանի օրուայ մէջ մի քանի անգամ անցաւ պատերազմող կողմերից ձեռքէ ձեռք: Օստենդէն ռազմազիտական շատ կարևոր նշանակութիւն ունի. վերցնելով այդ քաղաքը—գերմանացիք յենարան են ունենում Անգլիայի վրայ յարձակուելու: Անգլիան կարծես նախազգում է գերմանիայի մտազրութիւնը և իւր կողմից պատրաստութիւններ է տեսնում՝ Մեծ Բրիտանիան և Լոնդոնը մասնաւորապէս պաշտպանելու զերմանական ցեսպելիններից և թնդանօթներից:

Գ. Տէր-Ռուբինեան

1914, 18 հոկտ. ս. Ելմիածին

Ի գիտութիւն ընթեցողների

Պարբերական թերթերում տպուեց, որ Վեհափառ կաթուղիկոսը թոյլ էլուուել փոխադրել յայտնի բարեգործ հանգուցեալ Ենօք Բուղաղեանի աճիւնը Բազուի գերեզմանատանից նորակառոյց Ս. Թաղէոսի և Բարդուղիմէոսի եկեղեցին Պարտ ենք համարում հաղորդել ի գիտութիւն ամէնքի, որ այդ թոյլաւութիւնը Վեհափառի կողմից եղել է ի հետեւում Շամախու թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի և ծխական քահանայի յայտարարութեան, որով յայտնում են՝ թէ Բազուի Ս. Լուսաւորիչ եկեղեցու 1900 թ. չափարեսական մատենում, յօդ. արականաց 121, արձանագրուած է. Ենօք Բուղաղեանի թաղման մասին «Փամանակաւորապէս ամփոփեցաւ հասարակաց գերեզմանատան, առանց թաղման պատշաճաւոր կարգը կատարելու»:

